դպրանոց, ուր Ռուս Եկեղեցու ներկայացուցիչներին ընդունեց դպրանոցի տեսուչ Տ. Շնորհք աբեղա Սարգսյանը: Հյուրերը հանդիպում ունեցան ճեմարանականների հետ՝ ունկնդրելով նրանց ներկայացրած գեղարվեստական հայտագիրը: Վերջում Իլարիոն միտրոպոլիտն իր պատգամը բերեց ուսանողներին, հանգամանորեն պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին:

Դեկտեմբերի 13-ին Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակության ժամանակացույցը հագեցած էր տարբեր վանքեր այցելություններով: Օրվա սկզբին ռուս պատվիրակները մեկնեցին Կեչառիսի վանական համալիր, այնուհետեւ ուղեւորվեցին Գեղարդավանք: Վանահայր Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանի ուղեկցությամբ նրանք շրջայց կատարեցին Գեղարդավանքում՝ ծանոթանալով վանքի պատմությանը եւ ներկայիս կյանքին:

Օրվա ավարտին Նոր Նորքի հայորդյաց տան սաներն ի պատիվ հյուրերի պատրաստել էին համերգային ծրագիր, որի ավարտին Հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը Ռուս Եկեղեցու պատվիրակությանը հանգամանորեն ներկայացրեց մանուկների եւ պատանիների հետ Հայ Եկեղեցու կողմից տարվող աշխատանքը:

Դեկտեմբերի 14-ին պատվիրակությունը Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու բյուրավոր հայ նահատակների անմահ հիշատակին:

Հուշահամալիրում Մոսկվայի Պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Վոլոկալամսկի միտրոպոլիտ Իլարիոնը ծաղկեպսակ զետեղեց, ապա աղոթեց Հայոց Եղեռնի զոհերի հոգիների հանգստության համար: Հիշողության պուրակում միտրոպոլիտ Իլարիոնը նաեւ ջրեց Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Կիրիլ Պատրիարքի ձեռամբ տարեսկզբին տնկված ծառը:

Այնուհետեւ պատվիրակությունն ուղեւորվեց Երեւանում կառուցվող Ս. Խաչ ռուսական եկեղեցի, ուր Վոլոկալամսկի միտրոպոլիտը ծանոթացավ շինարարական աշխատանքների ընթացքին:

Կեսօրին պատվիրակությունը մեկնեց Մոսկվա:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանում մեկնարկված «Ցեղասպանության հանցագործությունը, կանխարգելում, դատապարտում եւ հետեւանքների վերացում» խորագրով միջազգային գիտաժողովի մասնակիցներին՝ ցեղասպանագիտության բնագավառում ճանաչված շուրջ 20 գիտնականների՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ փոխնախարար Արման Կիրակոսյանի:

Նորին Սրբությունը ողջունելով գիտնականների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ կարեւորեց ու խրախուսեց նրանց առաքելությունը ցեղասպանության ճանաչման գոր-

ծում: Վեհափառ Հայրապետը մասնավորապես նշեց. «Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ամենքիդ՝ ցեղասպանության դատապարտման եւ հետեւանքների վերացման ոլորտից ներս ձեր կատարած աշխատանքի համար: ...Այսօր ցավի եւ վրեժխնդրության զգացումով եւ ոգով չէ, որ առաջնորդվում է մեր ժողովուրդը՝ պահանջելով ցեղասպանության ճանաչումը: Մեր ցանկությունն է, որպեսզի ճանաչումը նպաստի նմանատիպ ողբերգությունների կանխարգելմանը: Մարդկությունը պետք է ավելի խիստ օրենքներ որդեգրի նման ոճիրների կանխարգելման համար: Մենք եւս՝ որպես եկեղեցի եւ եկեղեցականներ, մեր կողմից իրականացվող կարեւոր առաքելություն ենք տեսնում՝ կրթելու մարդկանց հոգին, որպեսզի յուրաքանչյուր ոք ընկալի, որ նման հանցագործություններն առաջին հերթին ուղղված են Աստծո արարչագործության դեմ: Մենք հավատում ենք, որ պիտի տեսնենք այն ժամանակները, երբ մարդկությունը պիտի զերծ մնա նման ողբերգություններից եւ ցավերից եւ այս իմաստով վերստին մեր գնահատանքն ենք բերում ձեր ջանքերի եւ աշխատանքի համար: Մեր աղոթքն ու հայցն ենք երկինք բարձրացնում, որ Տերն արդյունավորի, հաջողությամբ պսակի եւ բարի արդյունքների առաջնորդի ձեր աշխատանքը»:

Հանդիպումն ավարտվեց աղոթքով, որից հետո գիտաժողովի մասնակիցները այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ եւ ծանոթացան հայ ժողովրդի հոգեւոր արժեքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻ ԽՈՒՄԲ ԲԺԻՇԿՆԵՐԻ

Դեկտեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց մի խումբ բժիշկների՝ ուղեկցությամբ Արա Բաբլոյանի: Նրանք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ամերիկայի Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) կողմից իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում իրենց կամավոր աջակցություն են բերում Հայաստանի մարզերի, Լեռնային Ղարաբաղի եւ Ջավախքի բժիշկների վերապատրաստմանը մայրաքաղաքի լավագույն կլինիկաներում:

Հանդիպման ընթացքում ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բագրատ Սարգսյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ծրագրի աշխատանքները: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց բժիշկներին եւ ՀՕՖ-ին՝ կարեւորելով նրանց բարեգործական առաքելությունը բժշկական ոլորտի զարգացման գործում: «Մեզ համար հաճելի է այստեղ՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում, ողջունելու, մեր գնահատանքն ու օրհնությունը բերելու Հայաստանի տարբեր հասարակություններում բժշկության ոլորտում իրենց բարի ծառայությունը մատուցող մասնագետներին: Հուսով ենք, որ այս փորձի փոխանակումը դրական արդյունքներ պիտի ապահովի թե՛ բժիշկների վերազինման առումով, թե՛ մեր կարիքավոր զավակներին ավելի խնամյալ օգնություն ցուցաբերելու առումով», - նշեց Նորին Սրբությունը:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը պատասխանեց բժիշկների՝ եկեղեցական կյանքին վերաբերող հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ